

Ս. ՆԵՐՍԵՍ ԾՆՈՐՀԱԼԻ ԾԱՐԱԿԱՆՆԵՐԸ

(ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ)

(Շար. տե'ս «Բազմավեպ» 1974, ք. 3-4, էջ 380-403)

2. ՍՈՒՐԲԵՐՈՒ ԾԱՐԱԿԱՆՆԵՐ

Այլազան եւ բազմադիմի է այս շարքը, ուր միութեան գիծ մը կը զօդէ մասնական կտորները՝ ընդհանուր դադափարի մը մէջ, որ հասարակաց է բոլոր այս խումբի պատկանող շարականներուն. սուրբերը՝ ըլլան առաքեալներ, հայրապետներ կամ մարտիրոսներ, աստուածային խօսքին քարոզիչներն են, եւ իրենց չարշարակցութեամբ Փրկչին՝ կոչուած են փառքի։ Այս ընդհանուր տեսակէտը կ'ենթարկուի թեթեւ փոփոխութիւններու, իւրաքանչիւրի տեսակին եւ մասնական նկարագրին համաձայն. իսկ երբ ազգային սուրբերու նուիրուած են, նաեւ կը ճոխանան հայրենական զգացումով եւ պատմական հպանցիկ ակնարկներով։

Ա.՝ ԱՌԱՔԵԱԼՆԵՐՆ ՈՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ անմիջական հաղորդակիցներն են Քրիստոսի, անոնք որ լսեցին եւ տեսան Աստուածորդին, շրջեցան անոր հետ, շօշափեցին եւ զգացին իրենց վրայ ներգործութիւնը «Բանին կենաց»։ Շնորհալի տաք, մտերիմ եւ իմաստալից գեղեցկութեամբ կը խորհրդածէ այս հաղորդակցութեան վրայ։ Շարքին մէջ «Իմաստութիւն երկնային» շարականը միակն է այս ուղղութեամբ, նուիրուած «ՀԲ Աշակերտաց Քրիստոսի», որ իր նիւթը կ'առնէ, ինչպէս կը յայտնէ սկզբնաւորութիւնը՝ Հօր Աստուծոյ Բանէն, աստուածային իմաստութեան դադափարէն՝ իջած երկիր, Կ. հալածելու համար իբրեւ լոյս՝ անդիտութեան խաւարը, ք. ծովակէն կոչուած ձկնորսներու միջոցով որսալու մարդիկը՝ աշխարհի ծովէն, Գ. իբրեւ մշակներ եւ պաշտօնեաներ Երկնային Մշակին՝ բանաւոր էակներու մէջ սերմանելու սերմը աստուածային խօսքին։

Այս հիմնական դադափարներէն ետք՝ որոնք յետոյ պիտի մշակուին ու ընդլայնուին Կանոնին մնացած մասերով, կ'անցնի նկատելու, «Օրհնութեան» երկրորդ մասին մէջ, Ս. Գրքէն նմանութիւններ, խորհրդանշական ակնարկներ, ինչպէս Յաղէմի արմաւենիներու եւ աղբիւրներու թիւին համապատասխան առաքեալներու եւ աշակերտներու նախադուշակումը Հին Կտակարանին մէջ։ Շնորհալի յատուկ է կապեր հաստատել, Հինին մէջ վեր հանել նորին պատկերը եւ խորհրդանշական յայտնութիւնը։ Առ հասարակ շարականներու եւ երգերու մէջ անոր խոր հմտութիւնը կը մատնանշուի սուրբգրային մեկնողական ծանօթութիւններով եւ սուրբ Հայրերու գործերուն ընդլայնութեամբ։ Յատկանշական է Շնորհալի քով նաեւ դադափարային կապին սերտ միութիւնը տունէ տուն, անոնց ներդաշնակ համաձայնութեամբ, բղխումը մէկ դադափարէն միւսը եւ բանական թորողութիւնը միտքի։ Այսպէս՝ «Օրհնութեան» վերջնութիւնը հիանալի հետեւութիւն մըն է, ներքսապէս զօդուած, գեղեցիկ խտացումով, հիմնական դադափարէն ծնունդ առնող երկրորդականներու եւ յարակից մտածութիւններու։

«Որ շինեցեր ըզտուն քո զեկեղեցի,
իմաստութիւն Հօր Յիսուս,
եւ կանգնեցեր ի սմա սիւնս՝
ղեթնարփեան Հոգւոյն զօրութիւն.
եւ առաքեցեր ըղծառայս քո սուրբ զառաքեալսն՝
կոչել զհեթանոսս յարբումն ուրախութեան
խառնեցելոյ բաժակին.
աղաչանօք սոցա խնայեա ի մեզ,
մարդասէր Փրկիչ»։

«Օրհնութիւն»ը այս դիտուած դադափարային միութեամբ, արտայայտութեան վայելչութեամբ եւ պատկերաւոր ոճով՝ լաւագոյն մասն է, մնացածը՝ սկսեալ «Հարց»էն եւ իր սարքէն՝ ընդլայնում է նոյն հիմնական դադափարներուն։

Յորդորական է գրեթէ բոլոր միւս տուններու պարունակութիւնը. անոնց մէջ հեղինակը կը ձգտի խանդավառութիւն ստեղծելու՝ յիշատակով առաքեալներուն, որոնք մարդիկը հրեշտակներու կարգին բարձրացուցին։ Ծովէն առնուած պատկերը կը վերադառնայ «Մանկունք»ին մէջ. առաքեալները՝ հաղարապետներ աստուածային խորհուրդներու, «ի հոսամուտ մեղաց ծովէս» փոխադրեցին մարդերը դէպի անմահական կեանքը. այս կրկնութեամբ կը կապուի սկիզբն ու վերջը Կանոնին, կը շնորհակալ շարադրութեան ծրագրին էական դադափարը (աստուածային իմաստութեան գործը), որ ուղղուած էր մեղքէն, անկումէն, ստրկութենէն դէպի երանութեան վիճակը տա-

ներու Ադամին թշուառ սերունդը: Ամբողջութեան մէջ բացայայտորէն երեւան կու գայ Շնորհալիի ձգտումը տեսարանական միութիւն ստեղծելու, գեղեցիկ կառոյց տալու գաղափարին՝ իր մասնական նկատումներով:

Բ. — ՄԱՐԳԱՐԻՆԵՐՈՒ նուիրուած միակ հարազատ շարականը առ այժմ «Որ ընդ հոգեղէն» «Հարց»ն է, իր սարքով՝ հանդերձ, ուր բառեր ու դարձուածքներ կը նպաստեն վաւերականութեան Շնորհալիի շունչին: Արտայայտութեան եղանակն ալ կշիռ կու տայ անոնց: Տրամաբանական կարգի մը հետեւող իր ոճը, կարգաւորեալ ներկայացումը գաղափարներուն՝ ուրիշ վկայութիւններ են:

Հիմնական գաղափարը հոս իմաստասիրական սահմանէ մը կը մեկնի. առաջին տան մէջ անմիջապէս, հոգին օժտուած բանական մտքով, կարողութիւն ունի ընդունելու տպաւորութիւններ աստուածային շնորհքին «իջեալ ի վերաւստ»։ Երկրորդ պայմանը մարդարէութեան՝ սրբութիւնն է հոգիներու, որովհետեւ աստուածային ներգործութիւններու սովորական կարգը կ'ենթադրէ անձին արժանաւորութիւնը, հետեւաբար ընտանութիւնը՝ որպէսզի ընդունակ ըլլայ ազդեցութիւններու. եւ իրապէս հնութեան մէջ մարդարէները՝ էին «Այր Աստուծոյ»ներ: Անոնց մէջ է որ Հոգին Սուրբ կը ներգործէր յայտնութիւնը «քաղմապատիկ օրինակօք» Բանին անճառելի մարդեղութեան: Անոնք իրենց երեւակայութեան մէջ, կամ անմիջականորէն իմանալի մտքին առջեւ պատկերացած կը տեսնէին ապագան, անձը կամ դէպքը, ու կը նկարագրէին եւ կամ տեսիլքի մը մէջ կը ստանային տրուած յայտնութիւնը:

Շնորհալիի նպատակներուն մէջ եղած է միշտ ուսուցումի մտահոգութիւն մը՝ աստուածաբանական նման հարցերու, որոնց ըմբռնելիութեան համար պատշաճ կը համարի դիւրին ձեւեր արտայայտութեան. այս տողերէն են սա նկարագրականը մարդարէութեան սահմանին՝ «Օրհնութեան» երրորդ տան մէջ.

«Որ զանեղ գոյիդ լինելութիւն
 իբրեւ գեղեալ տեսանէին,
 յառաջնորդական միտս նոցա
 տպաւորեալ Հոգիդ զկերպարան իրին,
 գերագոյն հրաշիւք ի վեր քան զբան».

ուր ըսել կ'ուզէ թէ հրաշագործութեան մը պէս ապագան կը կերպարանուէր անոնց բարձր իմացողութեան մէջ (առաջնորդական միտքը ըստ բնագրին՝ գործող միտք) ազդեցութեամբ Հոգւոյն Սրբոյ: Անոնք «անեղ գոյիդ» (անստեղծ գոյութեանդ) ապագայ լինելութիւն

նը ներկայապէս կը տեսնէին: Պարզօրէն ըսուած այս տողերը դիտում մը ունին անշուշտ, մօտենալ ժողովուրդին:

Այդ բացատրութիւններէն ետք, դրուած իբր սկզբունք, Շնորհալի կ'անցնի շեշտելու քանի մը անհրաժեշտ գաղափարներ, որոնք յատկանշական են մարդարէներուն. ա. թէ անոնք «յառաջագոյն աւետարներն» էին մեր փրկութեան, զանազանելով այսպէս առաքելներէն՝ որոնք նոյնպէս աւետարներ եղան արքայութեան, բայց յետ ակնատես ըլլալու. Բ. «Եկեղեցիք հեթանոսաց» կը կազմեն Աստուծոյ նոր ժողովուրդը. «Նոր Իսրայէլ»ն է, մարդարէներով հրաւիրուած առ Աստուած, որ կը տօնէ հին հովիւները Իսրայէլի, դովելով անկեան գլուխը Քրիստոս, որ միացուց երկու որմերը իրարու (հին եւ նոր ժողովուրդները). Գ. իբր հետեւութիւն նախընթացին, այս նոր ժողովուրդը Սիւլմի դուստրն է, «Եկեղեցի հեթանոսաց» հարսն սիրելի ամուսն փեսային: Սակայն, երկրորդին փառքը շինուած «ի վերայ վիմին», բարձրագոյն է քան առաջինին եւ աւելի գեղազարդ վայելչութեամբ՝ զոր մարդարէները տեսան եւ աւետեցին. Դ. Աստուծոյ տունը հաստատուած է «ի գլուխս լերանց», այսինքն՝ ապահով եւ անմերձեանալի (թշնամիներէն) բարձրութեան վրայ՝ խօսքովը եւ կամքովը Բանին, եւ ուղղուած միշտ «յառաջ ձգուոյն», այսինքն՝ մարդարէական եւ առաքելական գործերու ներշնչումներուն առատահոս անձրեւներով:

Շարականը աստուածաբանական տեսութիւն մը միայն չըլլալուն՝ այլ նաեւ լոգօք մը, «Տէր յերկնից»ի եւ «Մանկունք»ի տուններուն վրայ ցրուած է յորդորական եւ ուրախութեան ազդակներ, բարձրացած Սիոնի դստեր որդիներէն, որոնք անսահման երջանկութիւնն ունին ըմպելու Հոգւոյն վտակներէն:

Գ. — ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ երգուած են Շնորհալիի քնարէն անդամ մը միայն ամբողջական կանոնով եւ սարքով, այն է «Այսօր սրբոց հայրապետացն» եւ «Որ էիք յառաջ քան»ով: Հարազատ համարուած այս շարականը ունի արդարեւ իր բովանդակութեան մէջ քանի մը հաւանականութեան նշաններ, Շնորհալիի ոճին եւ դարձուածքներուն:

«Ժողովուրդք հեթանոսաց» կամ «Եկեղեցի հեթանոսաց»ը Մարդարէից շարականին մէջ յաճախ յեղեղուած, կոչումն է Քրիստոսի նորակազմ եկեղեցւոյ, ինչպէս «Եւ զիսաւարն անգիտութեան յաշխարհէ փառատեցին»ը ՀԲ. աշակերտաց նուիրուածին մէջ՝ սիրելի բացատրութիւններն են հեղինակին: Բայց արդէն ընդհանուր ոգին, շունչը, խորքին լեցուն հանգամանքը, ուրիշ փաստեր են Շնորհալիի գրչին ի նպաստ:

Գրուած է Նիկիոյ եւ Կոստանդնուպոլսի տիեզերական ժողովներուն ոգիով: Ծարակնոցը դայն կապած է նաեւ «Երկերիւր հայրապետաց Եփեսոսի Ս. Ժողովոյն», իր բովանդակութեան մերձաւոր ընդհանրութեան պատճառով, եւ առ ի չգոյէ ուրիշ շարականի՝ որ յատուկէն ոգեկոչէր Եփեսոսի աստուածաբանական վճիռները: Շնորհալիի շարականին ներքին ոգին եւ բովանդակութիւնը էապէս կապուած է Նիկիոյ 325ին եւ Կոստանդնուպոլսի 381ին գումարուած ժողովներուն, վասնզի հոն շեշտուած են երկու հարցեր միայն. Որդւոյն Աստուծոյ անճառ ծնունդը «ի Հօրէ», Հոգւոյն Սրբոյ յաւիտենական բղխումը ի Հօրէ, եւ մշտնջենաւոր ու համազոյակից փառակցութիւնը Որդւոյն հետ: Ծարականը կը շեշտէ ուրեմն այս զոյգ կէտերը միայն քրիստոնէական աստուածաբանութեան, եւ անուղղակի կերպով կը պատշաճի Եփեսոսեան սահմանումներուն:

Որդւոյն յաւիտենական ծնունդը եւ Հոգւոյն բղխումը շեշտած ատեն՝ շարականագիրը կը մտցնէ երկու ուրիշ գաղափարներ ալ, որոնք յետոյ կը կրկնուին «Հարց»ին եւ սարքին մէջ. սուրբ հայրապետները համախմբուած յանուն ճշմարտութեան եւ լուսաւորուած Ս. Հոգիէն՝ վերստին ծնան հիմերը հաւատքին եւ տիեզերքը լեցուցին լոյսով: Ասոնք կը յեղյեղուին, կը կրկնուին յաջորդ տուններուն մէջ՝ խառն յորդորական ձեւով զգացական տարրերու, որպէսզի Թափանցելի ըլլան հաւատացեալներուն:

«Հարց»ին մէջ կատարուած ընդլայնումը կը շօշափէ նաեւ Բանին անհասանելի տնօրէնութեան խորութիւնը, եւ անբաժանելի միութիւնը Երրորդութեան. ասոնք այլեւս նոր գաղափարներու ներմուծում չեն, այլ հետեւողութիւն հիմնականին, անոր շուրջ կը դառնան, ջանալով ընտանեցնել դայն, արծարծել հաւատքը եւ ջերմացնել հոգիները:

Ուրիշ ի՞նչ կտորներ գրուած կրնան ըլլալ Շնորհալիէ սուրբ հայրապետներուն յիշատակին նուիրուած: Գրաւոր վկայութիւններ կը պակսին հաստատելու համար օրինակ՝ Ս. Եփրեմի «Որ Խաւմաման»ը, որուն սակայն ընդհանուր ոգին եւ արտայայտութեան եղանակը կը թելադրէ մեզ հակելու անոր հարազատութեան: Հայրապետաց «Հարց»ին գործատան առաջին տունը՝ իր հանդիսաւոր հրաւէր կոչով «Եկայք լուսաւորեալ ժողովուրդք հեթանոսաց»ը եւ «Որ Խաւմաման»ի «Եկայք լուսաւորեալ մանկունք առագաստի»ն ունին նոյնքան ջերմութիւն. մնացած մասին մէջ ալ ընդհանուր հարուստ պարունակութիւնը (հակառակ որ ձեռագրական փաստեր կը պակսին) կը ստեղծէ մեր մէջ Շնորհալիի ընծայելու հաւանականութեան տրամադրութիւն մը:

Մինչդեռ «Ով հրաշալի նախահարք»ին պայթարողական ոգին կը հեռացնէ նման հակում մը. բառեր եւ կարգ մը դարձուածքներ՝ որ

հասարակաց են հոն, պատճառ չեն կրնար ըլլալ խորհելու հաւանականութեան մը մասին, վասնզի գայլ ապակամիչի գաղափարը, հերձուածներու հերքումը քի հօսով գառանց՝ ուժգնադոյն կերպով ըսուած՝ չունին անոր վաւերական շարականին շնորհալի հանգամանքը, եւ ասիկա կը բաւէ մերժելու անոր հայրութիւնը՝ Շնորհալիի դրչին, որուն կը վերաբերեն ոմանք անտեղի կերպով, ինչպէս Գրիգոր Յակոբեան¹²:

* * *

Մասնական է Ս. Իգնատիոս Աստուածագգեաց. հայրապետին «Մանկունք»ը, «Որ հրաւիրեցեր»ը, ուր չի մօտենար ոչ մէկ աստուածաբանական հարցի. անոր մէջ գլխաւորապէս կը նկատէ վկան՝ որ իր արիւնով փաստեց աստուածութիւնը Քրիստոսի, եւ որ Հոռոմայեցոց դրած նամակին մէջ, որուն կ'ակնարկէ շարականին խօսքը, կը յիշէ անմահութեան սիրոյ բաժակը խմող Հայրապետին «աստուածային ցորեան» ըլլալու տենչը:

Գրիգոր աստուածաբանի «Մանկունք»ը, ընդհակառակն, «Որ լուսով աստուածային», յայտնապէս Շնորհալիի դրչին արդիւնք ըլլալու ներքին փաստերով ալ ճոխացած՝ կը պարունակէ արդէն տեսակէտներ, որոնք դաւանաբանական խնդիրներու շօշափում են, նոյնիսկ շատ մօտէն. առաջին՝ Ս. Երրորդութեան միասնականութեան եւ համազոյ բնութեան վարդապետութիւնը քարոզող, եւ երկրորդ՝ Քրիստոսի մարդեղութեան խորհուրդին բուն էական կէտին մէջ մըտնելով՝ կը գործածէ բանաձեւ մը որ բացորոշակի կերպով իրն է. «ուսուցեր մի յերկուց մօր խառնումն սքանչելի»: Այս եզրը «խառնումն» հայկաբան աստուածաբանութեան մէջ ի հնուց կիրարկուած, Ե. դարէն ասդին՝ յոյն, ասորի վարդապետներու քով եւս, Եւտիքէսի աղանդին յայտնուելէն առաջ եւ վերջը, գործածուած է «ամշիթ միութեան» իմաստով: Նոյնինքն Գրիգոր աստուածաբան՝ կիրարկած է իր ճառերուն մէջ (38, 42, 351) Քրիստոսի մարդկային եւ աստուածային բնութիւններու միութեան համար, որակելով ամլուր, ամիմամալի, սքանչելի միութիւն, եզրներ ու վերադիրներ՝ որ սուրբ Հայրերու մօտ, հայ եւ օտար, սովորական երեւոյթ մը դարձած են: Շնորհալի նոյնը կը գործածէ յաճախ առ Մանուէլ կայսր դրած նամակներուն մէջ, ուր խառնումն եզրը առնուած է «միութիւն»ի իմաստով, եւ բացարձակապէս չի պարունակեր Զիոթութեան, լուծման, իւրացման կամ փոխանակումի գաղափարները, ինչպէս բնութիւններու շփոթումով վարդապետած էր Եւտիքէս: Նոյնը կու տայ մեզի «Թուղթ Ընդհանրական»ի մէկ վկայութիւնն ալ, որ

կը կանխէ նամակները. հոն ալ զմայլելի յստակութեամբ բանաձեւուած կը գտնենք «եւ առեալ ի բնութենէ նորա (Ս. Կուսին Մարիամու) մարմին եւ հոգի եւ միտս, խառնեաց նոր եւ անճառելի միաւորութեամբ ընդ աստուածութեան իւրում»¹³: Այս տողերը՝ պարզապէս փաստելու համար թէ հեղինակի նոյնութեան ապացոյց մը եւս այն շարականէն, որ կը նկատուի Շնորհալիի հարազատներէն:

Դ.՝ ՄԱՐՏԻՐՈՍՆԵՐԸ՝ քրիստոնէութեան վկաներ, իրենց բուն փառաբանները ունեցան Շնորհալիէն, այն երգերուն մէջ՝ որոնք ազգային նկարագրով մը յատկանշուած են, եւ որոնց պիտի անցնինք քիչ ետք: Սակայն քանի մը «Մանկունք»ներէն, որ կը յիշուին իբր Շնորհալիի գործ՝ առաջինը Եւստրատիոսեանցն է «Որ զիւր սիրոյ», ուր հոգեբոլ բանաստեղծը կը հիմնուի մարտիրոսներու վկայաբանութեան տուեալներու վրայ, իւրաքանչիւրին յատուկ պարագան ուղեւոր շնորհիւ. Եւստրատիոս խարոյկի վրայ բարձացած՝ վառեցաւ հրով Քրիստոսի, իմաստութեամբ արհամարհելով երկրաւոր փառքը եւ հաճոյքը. այս տողերուն տակ, ուրեմն, անոր մարտիրոսութեան մանրամասնութիւնները կան թաքուն, եւ խարոյկին գեղեցիկ շրջումով՝ կը ներկայացնէ զայն մեղի որպէս կամաւոր ողջակէզ: Նոյն ձեւով կ'երգէ անոր չորս նահատակակից ընկերները, օգտագործելով մասնական պարագաները իւրաքանչիւրէն՝ կենդանացնելու համար իր գրական ու հոգեւոր պատումը, որուն անմիջական նպատակն է արծարծել եկեղեցւոյ մանուկներուն մէջ՝ մարտիրոսներու հոգիէն եկած սիրոյ եւ նուիրումի կայծը:

Երկուց Բիւրուց «Մանկունք»ը կը զգացնէ նման ոգեւորութիւն մը՝ անսովոր եւ անմարդկային դիւցադնութեան, զոր սէրը միայն գիտէ ընել տալ. այրի խարոյկի վրայ, կրակէ բոցերու մէջ երգել Աստուծոյ օրհնութիւնները՝ ինչպէս Բարեւոյնի երեք մանուկները, (որոնց համար հնոցին բոցը՝ աստուածային միջնորդութեամբ՝ ցօղադին գովութեան մը վերածուած էր). անոնք՝ մարտիրոսները՝ բանաւոր ողջակէզներ են, սրբութեան սեղանի վրայ հանուած կամաւոր պատարագներ, եկեղեցիէն՝ Քրիստոսի հարսէն իր փեսային ընծայուած հոգիներ, որոնք հրեշտակներու հետ կ'երգեն փառքը երկնաւոր թաղաւորին. տպաւորիչ իմաստներ բոլորն ալ՝ որոնցմէ հեղինակը նպատակ ունի հաւատացեալ ժողովուրդին մէջ արթնցնելու սէր, զմայլում նահատակներու հանդէպ, խթանելով բարեպաշտութեան ու սրբութեան զգացումներ, քրիստոնէական փշալից ճամբուն վրայ:

13. Թուղթ Ընդհանրական, Վենետիկ, 1829, էջ 30. (հրատարակուած լատին թարգմանութեամբ հանդերձ):

Թեոդորոս Ստրատելատի «Մանկունք»ին մէջ եւս («Որ ընտրեցեր ի սկզբանէ») կը վերագառնան նոյն գաղափարները հուրի եւ ողջակէզի, յատկանշական բանաստեղծին:

Ե.՝ ՀՐԵՇՏԱԿՆԵՐՈՒ, ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏՆԵՐՈՒ Եւ ԵՐԿՆԱՅԻՆ ԶՕՐԱՑ նուիրուած շարականը տարբեր է «Մաղթանք առ Ս. Հրեշտակներէն»: Ոմանք, կ'ըսէ Աւետիքեան¹⁴, կարծեցին թէ շարականը եւ մաղթանքը նոյնն ըլլան: Այսօր ալ թերեւս այդպէս խորհողներ ըլլան. սակայն, քերթուածին յիշատակարանը կը զանազանէ յայտնապէս այդ երկուքը, անջատելով իրարմէ «եւ» շաղկապով:

«Յարմարեցաւ շինուած ճառիս
եւ եղանակը շարականիս
առ ի պատիւ մեծի տօնիս»:

«Մաղթանք»ը¹⁵ ոչ մէկ երեւոյթ ունի շարականի, խորհրդածութիւն մըն է նախ, յետոյ՝ նկատում մարդկային կարօտութիւններու եւ տենչանք հրեշտակներու նմանակցութեան: Աղօթական հանգամանք չունի, եւ ոչ ալ՝ հետեւաբար՝ շարականի: Բառեր, դարձուածքներ կը մատնեն տեղ տեղ նոյն դրիչը, ինչպէս՝

«Մեք տկարքս եւ հոգեղէնքս... մարմնաւորքս եւ հոգեղէնքս...
Հրեշտակապետք Բարձրելոյն... որ Աստուծոյ առաջի կայք»...
եւն...:

Շարականի ընտանի եղողները դիւրաւ կը հասնան թէ հեռաւոր արձագանգ մը միայն կը կապէ յիշեալ տողերը շարականին: Սակայն բացի Յիշատակարանի վկայութենէն, ունինք Կենսագրին ալ վկայութիւնը (Սովիւրք ԺԴ.), որ կը հաւաստէ Հրեշտակներու նըւիրուած շարականին հեղինակութիւնը:

«Օրհնութիւն»ը («Որ յանէից»), բոցեղէն էակներու բնութիւնը կ'երգէ նախ, անոնց ոչնչէ, ստեղծումը իբրեւ հրեղէն էակներ, հրեղէնը՝ ըսուած նմանութեամբ կրակի բնութեան, անօրութեան, թափանցիկութեան, զօրութեան եւ ազդուութեան: Հուրը զգալի կամ նիւթական՝ համանունօրէն, ուրեմն, ստորոգում է իմացական հոգիներու, լուսեղէնի իմաստով, ինչպէս ինքը Ստեղծիչն ալ է հուր եւ լոյս՝ իր բնութեամբ:

«Որ յանէից ստեղծեր զպաշտօնեայս ըս
ի հուր կիզելոյ՝ հուրդ անեղական.
ընդ նոսին օրհնեմք զքեզ եւ մեք հոգեղէնքս»:

14. ԱԻԵՏԻՔԵԱՆ Հ. Գ., Բացատրութիւն շարականաց, էջ 562:

15. Հրատարակուած Բաճի չափաւ մէջ, Վենետիկ, 1928, էջ 287-296:

Որ բանիւ դոյացուցեր զիննեակ դասս
հրեղինաց՝ Բանդ ի սկըղբանէ.
ընդ նոսին դովեմք զքեզ եւ մեք հողեղէնքս:

Որ արարեր յոգիս իմանալի
զհրեշտակս քո՝ Հոգի Աստուծոյ.
ընդ նոսին բարեբանեմք զքեզ եւ մեք հողեղէնքս:

Առաջին երբեակ տուններն են, որոնց պիտի յաջորդէ նոյնքան եւս՝ «Հարց»էն առաջ: Պարզ, թափանցիկ, լուսեղէն, վճիտ տողեր, ազաւական՝ բայց նաեւ էապէս նկարագրական: Կազմին պարզութիւնը ակնբախ է: Ս. Երրորդութեան անձերու դերը, համադոյակից բնութիւններու յիշատակումը՝ իւրաքանչիւրին յատկանշականով՝ աստուածաբանական է իր խելութեամբ եւ շարադրութեամբ:

«Հարց»ը իր առաջին մասին մէջ նոյն կազմն ունի, ուր Հայրը՝ առաջին լոյսն է անճառելի, որ դոյացուցած է իմանալի էակները՝ իբր լուսեղէններ. Որդին՝ էակից Հօր եւ ծագումն «ի լուսոյ», որ ստեղծած է պաշտօնեաները իր փառքին. Հոգին՝ բղխումն ի Հօրէ եւ փառակից Որդւոյ՝ որ ստեղծած է հողեղէնները ամբողջ, իննեակ դասերը կատարեալ էակներու. կատարեալ՝ յատկանշական մակդիր է հրեշտակներուն, դանաղանելու համար մարդէն, որուն հոգին անմարմին չէ, կամ անհաղորդ մարմնի, այլ կը ձգտի անոր՝ ամբողջութիւն մը կազմելու:

Երկրորդ մասը «Հարց»ին (կոչուած «Գործատուն»), արդէն ինը դասերու թուարկումն է, «օրհնեցէք եւ բարձր արարէք»ի կոչով: Ծնորհալիի տուած դասակարգութիւնը աւանդականն է, ծանօթ արեւմտեան եւ արեւելեան աստուածաբանութեան մէջ. Ա. Հրեշտակներ, Հրեշտակապետներ, Պետութիւններ, Բ. Իշխանութիւններ, Զօրութիւններ, Տէրութիւններ, Գ. Սերորէներ, Քերորէներ, Աթոռներ:

Նոյն թուարկումը կը կատարուի, սկսելով բարձրագոյնէն՝ «Տէր յերկնից»ին մէջ, կոչելով զանոնք առաջին, երկրորդ եւ երրորդ դասու քահանայապետներ: Ծնորհալին, ինչպէս յետոյ Ներսէս Լամբրոնացին¹⁶, հետեւած են Կեղծ-Դիոնիսիոսի Հրեշտակներու դասակարգութեան վարդապետութեան, արդէն ընդհանրացած տիեզերական Եկեղեցւոյ մէջ: Այս վարդապետութեան համաձայն՝ ինը խումբերու հոգեղէն էակները՝ այդպէս ստեղծուած են Արարչէն, եւ ոչ թէ «ըստ արժանիքի», ինչպէս Որդինէս († 254) կը թելադրէր, հասած են աստիճաններու տարբերութեան: Անոր դէմ Մեթոսիոս († 311) պաշտպանեց հրեշտակներու տեսակարար նոյնութիւնը՝ աստուածա-

յին ինքնիշխան կամքով ստեղծուած: Դիոնիսիոսի համաձայն՝ առաջին խումբինները, աւելի մօտ Աստուծոյ, անընդմիջաբար կը ստանան լուսաւորութիւնն ու գիտութիւնը, եւ իրենցմով կ'անցնի երկրորդին, եւ ասոնցմէ՝ երրորդին, որոնք աւելի մօտ են մարդկութեան: Այս դադափարէն ներշնչուած է «Ողորմեա»յի եւ «Մանկունք»ի պարունակութիւնը. հրեշտակները եւ հրեշտակապետները են «աւետաւոր ամնառելի տնօրէնութեան» եւ «ի ձեւ մարմնոյ», ծառայողներ մարդկութեան, առաջնորդելով զանոնք, ծանուցանելով Աստուծոյ կամքը, եւ կոչուած են «քարեկամք ազգի մարդկան», «միջնորդ մահու եւ յարութեան»:

Ծնորհալի չի մօտենար աստուածաբանական մտահոգութեամբ հրեշտակներու տեսակարար տարբերութեան, արժանիքի կամ պատուի կողմէ անոնց ունեցած զանազանութեան, հարցեր՝ որոնք Որդինէսէն մինչեւ Մեթոսիոս սաստիկ վէճերու դուռ բացին, եւ որոնց մասին սուրբ Հայրերէն շատեր իրենց սեփական կարծիքը յայտնեցին, մինչ ուրիշներ խոստովանեցան իրենց տգիտութիւնը, ինչպէս Ս. Օգոստինոս: Ծնորհալի կը թուի շեշտել, սակայն, այն տեսակէտը՝ որ անոնք իրենց պաշտօնատարութեան տարբերութեամբ կոչուած են այլազան անուններով, եւ ոչ թէ արժանիքէ մը ետք ըստացած ըլլան պատուոյ դիրքեր՝ երկնային արքունիքին մէջ. «ամեն ինքն Աթոռք» են անմիջական սպասաւորները Ամենակալին. «քառակերպեան Քերովբէք» եւ «վեցքեւեան Սերովբէք»՝ աստուածային ահաւորութեան եւ անմատչելի փառքին վկանները՝ իրենց յատկանիշը կազմող տիտղոսներով. Եսայիի մարդարէութեան եւ հայրախօսական մատենագրութեան արձագանգ տալով հանդերձ՝ Ծնորհալի դիւտաւոր պանկերացումներ ունի, ինչպէս յաջորդ կտորին տիտղոսները ցոյց կու տան, արդիւնք իր բանաստեղծութեան եւ մեկնաբանութեան, հիմնուած Դիոնիսեան աւանդութեան վրայ¹⁷.

Անմահ արքային անարուեստ աթոռք,
բազմաչեայ քերովբէք,
սրբասաց ձայնիւ սերովբէք,
առաջին յերկինս քահանայապետք:

Բարձրելոյն փառաց բարձող տէրութիւնք,
անյաղթելի զօրութիւնք,
վեհագոյն իշխանութիւնք,
երկրորդի դասուն քահանայապետք:

17. Աւանդական կարգը, որու մանրամասնութիւնը տրուեցաւ վարէն դէպի վեր, կը համապատասխանէ ֆրանսերէնով հետեւեալ յատկացումներուն, բարձրանալով վարէն վեր. 1° Anges, Archanges, Principautés; 2° Puissances, Vertus, Dominations; 3° Séraphins, Chérubins, Thrônes.

16. ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ, Մեկնութիւն Խորհրդոյ պատարագին, Վենետիկ, 1847, էջ 80, 133 230, 231:

Գերազոյն էին պետութիւնը վերին,
Հրեշտակապետք երկնաւորք,
Հրեշտակաց զինուորութիւնը,
Երրորդի յերկինս քահանայապետք»:

Պարզունակ սա տողերը շնորհք մը ունին եւ ամբողջ վարդապետութիւն մը կը պարունակեն. Շնորհալի նիւթապէս չի կրկնէր աւանդութեան ձայնը, խորհրդական բացատրութիւն մը կը յարէ՝ երկնային զօրքերու իւրաքանչիւր խումբին եւ անոնց կատարած դերին բացայայտիչ մասնայատկութիւններով, որոնք կը կրեն անոր հանձարեղ արտայայտութեան եղանակը:

Զ. — ԱԶԳԱՅԻՆ ՍՈՒՐԻԲԵՐԸ առանձին խումբ մը կը կազմեն, ուր պատմական ակնարկը աւելի քան հայրենասիրական զբաղումը՝ ունի իր բաժինը անոնց յղացքին եւ շարադրութեան մէջ: Անոնցմէ մաս մը հայրապետներու առաքելական ոգիին երգը կը հիւսեն, եւ ուրիշ մաս մը՝ մարտիրոսական ողջակիզումին գրուածքը:

Այս կարգին մէջ առաջին նկատելի շարականը Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌԻՉԻՆ է, որուն ի յիշատակ Շնորհալի դրած է «Որ ի Հօրէ առաքեալ» «Հարց»ը իր սարքով, որ այսօր կը կիրարկուի սուրբին խոր Վերապ մուտքի յիշատակին օրը: Բայց Լուսաւորիչ տօնախմբութեան շատ կանոններ, եւ աւանդութեան համաձայն՝ խորհրդացիին է «Ով Երջանիկ տէր սուրբ Գրիգոր»ը, եւ «Արմատ ճշմարիտ» շարականը իբր «Օրհնութիւն», կամ՝ ոմանց համաձայն՝ Յովհան Մանգակունիի: Կանոնը ամբողջական է, այսինքն հ. «Որ առաքեցեր», ո. «Քարէ խոստութեամբ», տ. «Առաջնորդ հաւատոյ», մկ. «Հրաշափառ Աստուած», հ. «Որ կոչեցար յորդեգրութիւն», շարականներ որոնք երկար դարեր հաւանաբար խանդավառած են հայ կղերը, եւ ինքը Շնորհալին ալ երգած է զանոնք:

Այս բոլորին վրայ Շնորհալիի յաւելումը «Հարց»ն է իր սարքով, այսինքն հ. «Որ ի Հօրէ առաքեալ», ո. «Որ կոչեցեր զհեռացեալս», տ. «Այսօր զիմանալի», մկ. «Այսօր տօնէ եկեղեցի»: Ինչո՞ւ Շնորհալի ստեղծած է երկրորդ «Հարց» մը, առանց «Օրհնութեան». այս կէտը անբացատրելի կը մնայ: Ժամանակ մը ետք Յովհաննէս Երզնկացի, Սեպուհ լեւոն հրաշալիքին եւ նշխարներու յայտնութեան առթիւ՝ գրած է իր երկու շարականները «Այսօր գուարնացեալ» այլ ուրեանական կարգով, եւ հետեակ շարականը՝ «Լեւիմ ամենայն»: Շարակնոցին վերջին կարգաւորութեան ատեն «Լեւիմ ամենայն»ը անցած է Սուրբին նշխարաց դիւտին, իսկ «Այսօր գուարնացեալ»ը

իբր «Օրհնութիւն» զետեղուած է խոր Վերապ մուտքի յիշատակին:

Շնորհալի, ուրեմն, Լուսաւորիչի տօնախմբութեան մէջ համեստ բաժին մ'ունի, ինչպէս յետոյ Որդուց եւ Թոռանց համար նուիրած է ուրիշ «Հարց» մը՝ իր ամբողջ սարքով: Այս երկուքը ի վերջոյ կը մեկնին նոյն պատմական եւ կրօնական տունալիքէն, եւ քանի մը հիմնական զաղափարներէ՝ որոնք կը կրկնուին: Լուսաւորիչ տիտղոսը բանաստեղծին մտքին մէջ եղած է թելադրիչ մայր զաղափարը. լոյսէն կ'առնէ առաջին ներշնչումը: Քրիստոս՝ որպէս արեգակ արդարութեան ծագած մարդկութեան վերեւ, ծաւալած է իր լոյսը նախ առաքելներով, որոնց յաջորդներն եղան հայրապետները, քարոզիչները Բանին. անոնցմէ է Հայաստանեայց առաքելը Գրիգոր՝ որ հաւանքը անդիտութեան խաւարը: «Ընդ լուսաւորչին լուսաւորեալ», «աշակերտեալ ճշմարտութեան» եւ «նորածնեալ աւագանան» եւ զանք որդիներ քրիստոսական հաւատքին: Լուսաւորութիւն, ճշմարտութեան աշակերտութիւն եւ վերածնունդը հողիներու աստուածատեան կեանքով՝ երեք մեծ զաղափարներ են, որոնց շուրջ կը դառնայ ինչպէս շարականները վերադարձ մը կ'ընեն ասոնցմէ մէկուն կամ միւսին եւ կ'ընդլայնեն միտքը, արծարծելով հիացում, սէր եւ գոհարանական զբաղում: Այս դրութիւնը՝ հիմնական զաղափարէն իջնելու մասերու եւ կէտ առ կէտ վերլուծելու՝ յատուկ է Շնորհալիի ոճին, դիտուած իր միւս շարականներու վրայ ալ:

Հարազատութեան տեսակէտէն նկատելի է «Ողորմեա»յի սա հատուածը.

«Ի դրի ներքնումն իջմամբ նորին
բարձրացուցեր զմեզ ի յերկինս».

որ կը հնչէ շատ մօտ «Նորոգող տիեզերաց»ի հետեւեալ տողերուն.

«Ի դրի ներքնումն իջանելովն
ի դրոյն մեղաց վերաբերեալ».

ուր յօրինուածքը, արտայայտութեան եղանակը, բառերու դիրքը կը ցուցնեն բացայայտ նմանութիւնը եւ հարուածը նոյն դրէի:

ՈՐԳԻՆՈՑ ԵՒ ԹՈՌԱՆՑ Կանոնի «Հարց»ը կը շարունակէ ներշնչումի նոյն դիրքը՝ առած լոյսի զաղափարէն, լոյս՝ որ ծաւալած է շառաւիղներով Ս. Գրիգորի, նպաստելով հաստատութեան Հայաստանեայց եկեղեցւոյ եւ դարձին «ի խաւարէ կոապաշտութեան», «յանդիմանելով գրոնութիւն քաղաւորաց», եւ նահատակուելով Աստուծոյ օրէնքներուն պահպանութեան համար: Այս քանի մը կէտերը կը վերածաղկուին եւ կ'ընդարձակուին «Հարց»ի միւս մասերուն մէջ,

եւ համակրական չեղտի արտայայտութիւն մը՝ անոնցմէ իւրաքանչիւրին, հիմնուած պատմութեան կամ աւանդութեան ձայնին վրայ: Ինչպէս Վարդան՝ անունին առնչութեամբ «վարդագոյն» արիւնին կապով եւ վանել բառախաղով կը ներկայանայ, քիչ թէ շատ բնական եւ առանց արուեստականութեան. նոյնպէս են միւսներն ալ. կը բաւէ թեթեւ անդրադարձութիւն մը՝ գտնելու անոնց պատճառական փաստերը: Խորէն Խոռոխութիւնն տրուած «խոհական» եւ «խորհրդական» տիտղոսները կը հիմնուին անոր մարդկային արժէքներուն վրայ, ու անշուշտ նաեւ տաղաչափական պատճառի մը վրայ: Նմանապէս Արտակ Պալուէն՝ անունին ստուգարանութեամբն է որ ներկայացուած է (ատր = կրակ), որմէ կ'առնէ դադափարը՝ հրագոյն արիւնին մէջ թաթաւուած («ի կարմրութիւն բոսորային բլլսեալ աղբերն») նկարագրելու գիւցաղը: Այսպէս են բոլոր միւսները՝ Հմայրեակ Դիմաքսեանի, Տաճատ Գնթունիի, Վահան Գնունիի, Արսէն Ընծայեցիի գլխաւորները եւ Գարեգին Սրուանձտեանցի՝ որ գլուխն ու աւարտն է մարտիրոսներու: Շնորհալի՝ Եղիշէն առնելով հանդերձ անուններն ու անոնց կարգը՝ դուրս թողած է Ներսէս Քաջբերունին, որ իններորդն էր «մեծամեծ» նախարարներու, իրենց հետ անմիջապէս նահատակուած՝ 287, իսկ Ղազար Փարպեցիի համեմատ 276 զինուորներու հետ, որոնց թիւը կը բարձրանայ նոյն օրուան մէջ 1036¹⁸, համաձայն երկու պատմիչներուն: Սակայն բացակայութիւնը Ներսէս Քաջբերունիի անունին՝ մարտիրոսներու հոյլին փառապսակին մէջ, կարծէք կը վերաբերէ ամբողջութիւնը: Զէ կարելի, միւս կողմէ, անտեսումի վերագրել զայն, այլ միայն գործնական դժուարութեան մը՝ քանի որ Շնորհալի պարտաւորուած էր թողուլ մէկը նուիրականացած անուններէն. ինչ որ տեղի ունեցած է պարզապէս անոր համար՝ որ տուններու սկզբնաւորութեան գիրքը, որոնք պիտի կազմէին Ներսէսի երգ ծայրանունը, լրացած ըլլալով՝ անկարելի էր իրեն անուններու շարքին անցնել նաեւ Ներսէս Քաջբերունին:

3. ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ

Առանձին չարք մը կը կազմեն ասոնք Շնորհալիի կրօնական բանաստեղծութեան մէջ, եւ կը զանազանուին իրենց յղացքով, շարադրութեամբ եւ ընդհանուր նկարագրով շարականներէն: Այդ հոգեւոր երգերը իր մահէն ետքը մտած են, շատ հաւանաբար, ժամակարգութեան մէջ:

18. Հմայր. Եղիշէ, Պատմութիւն վարդապետի եւ Հայոց պատերազմի, Վենետիկ, 1950, էջ 234: Ղ. ՓԱՐՊԵՅԻ, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1933, էջ 228:

«ՅԻՇԵՍՏՈՒՔ» եւ «ԶԱՐԹԻՔ» առաջիններն են անոնց մէջ, եւ ծնած բանաստեղծ հայրապետի սրտէն, կրօնական կրթութեան պահանջի մը դոհացում տալու համար: Ծանօթ է ազգին մէջ անոնց ծագման աւանդութիւնը, հաստատուած վկայութեամբ Կ. Գանձակեցի պատմագիրն¹⁹: Կրօնաշունչ երգն է ու աղօթքը բերդապահ զինուորներու, որոնք կը պահպանէին Հոռմկլայի կաթողիկոսական ամրոցը: Հոն այդ երգին բառերուն մէջ ապրումներ կան, որ սաղմոսի խոր իմաստներէն կու գան, կամ Աւետարանի իմաստուն կոյսերու առակէն. համաձուլում մը զգացումներու՝ բխած աղօթասէր հայրապետին հոգիէն, ներշնչելու համար նիւթին վարժած մարդերու բերնին մէջ՝ Աստուծոյ անունը քաղցրացնելու դադանիքը: Գիշերը նուիրագործելու, արշալոյսն ողջունելու սրտի երգով, որ Աստուծոյ անունովը բացուի:

Զարթիք, փառք իմ, զարթիք փառաբանութիւններն իմ լեզուին, գովեստն ու երգը սրտիս՝ ուղղուած առ Աստուծոյ, առ հասարակ իմ. զարթիք, ու արթննամ ես ալ առտուն կանուխ՝ ողջունելու կեանքն ու բնութիւնը եւ Աստուծոյ: Զարթիք, ո՛վ մարդիկ, հրեշտակներուն հետ. զարթիք, արարածներ լոյսի, որդիներ Լոյսի Հօր՝ փրկեալներ արիւնով, նոր ժողովուրդ Աստուծոյ. արթնցէ՛ք, ինչպէս կոյսերն արթնան, ո՛վ սրբամաքուր հոգիներ, ու վառեցէ՛ք կանթեղները ձեր հոգիներուն. արցունքը ձեր աչքերուն՝ իւրն ըլլայ լապտերներուն. եղէք պատրաստ եւ մի՛ ննջէք, յիմար կոյսերուն նման:

Այսքան տաք, խանդավառ ու եռանդուն ողջոյնը օրուան ծագումին՝ Շնորհալի գրած է անմիտ եւ աշխարհիկ խօսակցութիւններու վարժած մարդոց բերանը, որոնք պարապութիւնը եւ գիշերային նուիրական լուրերը կը սպաննէին ընդունայնարանութեամբ եւ կամ չարագոյն զրարանութեամբ կամ զաղրարանութեամբ: Իմաստուն եւ շարադրութիւնները, որոնք եկեղեցական ժամակարգութեան կազմաւորման ատեն՝ գիտցած են օգտագործել այս աղամանդեայ եւ մարդարտայեւ տողերը եւ լուրիսը աստուածաբաւ Հայրապետին աղանդական հոգիին:

«ԱՌԱՒՈՏ ԼՈՒՍՈՅ» երգը գիշերային պահներուն կը յաջորդէ՝ ինչպէս արշալոյսը խաւարին: Հոգեբոլ քերթողը լոյսի կարօտը ունի, եւ այդ լոյսը ինքը Քրիստոսն է, արեգակն արդար, Բանն Լոյս, ծնեալ ի Հօրէ: Ներշնչումը ուղղակի աստուածաբանական է եւ մարդ-

19. «Արար նա երգս եւ ուսոյց այնոցիկ որ պահէին զբերդն, զի փոխանակ վայրապար ձայնից՝ զայն ասացեն, որոյ սկիզբն է սաղմոսն Դաւթի Յիշեցի ի զիշեցի զանուն քու Տէր, եւ այսպէս խորհրդարար ըստ կարգի. Զարթիք, փառք իմ, որ այժմ ասի յեկեղեցի ի ժամ գիշերային պաշտաման», Վենետիկ, 1865, էջ 68:

թիւնը, իմաստութիւնը, բարութիւնը աստուածային բնութեան մէջ, գոյացնելով գեղեցիկը, օգտակարը:

Առաջին օրուան ստեղծագործութեան խորհուրդը այսպէս համանշանման տարածութեամբ, երգին առաջին տան մէջ, գերազանցօրէն պարփակուած է, կուռ նկարագրականով, որ եղանակն է Շնորհալի:

«Նորաստեղծեալ Բանն յանէից
ի սկզբանէ գերկինս երկնից,
եւ գերկնային զօրս անմարմնոց
իմանալեացն զըւարթնոց,
եւ ըզգալի տարերց քառից
հակառակաց միաբանից,
որով յաւէտ փառաբանի
Երրորդութիւնն անճառելի»:

Լոյսը կրկնակի կերպով առնուած է. Իմանալի լոյսը՝ երկնքները, երկնային զօրքերը, եւ զգալի լոյսը՝ չորս գլխաւոր տարրերու սկզբունքները. ասոնց մանրամասնութեան երգը պիտի կազմեն յաջորդ տունները: Յղացումը բանաստեղծին մտքին մէջ ծնունդ առած է միշտ լոյսի գաղափարէն, առանց անջատելու իրարմէ իմանալին եւ զգալին՝ իբր առաջին օրուան ստեղծագործութիւն:

Կիրակին յիշատակն է յարութեան. օրուան խորհուրդին մէջ կը մտցնէ մեզ իսկոյն Յրդ տունով. Քրիստոս որ իմանալի լոյսն է, մարմնական աչքերու անտեսանելի եւ հոգւով միայն իմանալի, միաշաբթի օրը ծագեց մեղի ճառագայթը յարութեան. խորհրդական նշանակութիւնը օրուան եւ նուիրականութիւնը կապուած է այսպէս քրիստոնէութեան մեծագոյն տօնին եւ Քրիստոսի փառաւորութեան:

Միւս տունները կ'ընդլայնեն յարութեան մայր-գաղափարը նոր կեանքի աւետիսով՝ տրուած առաքեալներուն Գալիլեայի լեռան վրայ, եւ կոչովը «Զարթիք»ի Միոնի որդիներուն, որ աւետեն «Հարսին լուսոյ», այսինքն՝ Եկեղեցւոյ, թէ փեսան «յարուցեալ» յաղթած է մահուան՝ իր իշխանութեամբ, եւ կու գայ պսակելու զինքը փառքով, յարութեան յոյսով, ըլլալով ինքը առաջին պտուղը ննջեցեալներու յաւերժական կեանքին:

Սլացք, հոգեկանութիւն, սրտի զուարթութեան նոր այգ, ահա ինչ որ «Նորաստեղծեալ»ը կը ներշնչէ քրիստոնեայ հոգիներուն, հաւատքի անխախտ խարսխումով աստուածային Բանին զօրութեան վրայ:

«Նորաստեղծեալ»ը, որ սկիզբն է այս շարքին, կը յօդէ հեղինակին անունը Ներսէս. մնացած տունները, բաժնուած շաբթուան միւս օրերուն վրայ, այբուբենական կարգին կը հետեւին: «Նորաստեղծեալ»ը

ծեալ»ը կարելի էր նոյնիսկ համարել իբր շքեղ վերջաբան «Արարչական»ին եւ կիրակին երգը՝ իբր երգ լոյսի արարչութեան:

«Արարչական»ը երկրորդ օրուանն է, որ կ'երգէ հաստատութիւնը երկնքին, անջրպետումը հողեղէններու՝ հրեղէններու աշխարհէն, ու կ'անցնի երկնային հոգիներու դասակարգութեան, երկուշաբթին ըլլալով նուիրուած անոնց: Աւանդական կարգին է որ կը հետեւի Շնորհալի, այն կարգին՝ որու մասին անդրադարձանք խօսելով Հրեշտակներու շարականին վրայ խօսած ատենինս. հոս, սակայն, կարգը թեթեւ մը ենթարկուած է փոփոխութիւններու:

Երրորդ օրուան շարականով կ'երգէ մէկտեղումը ջուրերուն, երեւումը ցամաքին եւ ծլարձակումը բուսականութեան, աշխարհի երրորդ օրը կապելով կեանքի երեւման երրորդ դարուն եւ ջրհեղեղի դադարին ու մարդկութեան նոր ծնունդին՝ Նոյով. կեանքի մեղքի հեղեղին ջնջումէն ետք՝ կը փառաբանէ յայտնութիւնը աստուածային ոգիով վառ մարդոց՝ նահապետներու, մարգարէներու, յատկապէս Յովհաննէս Մկրտիչի՝ որուն նուիրուած են յաջորդ չորս տունները, որպէս հողեղէն հրեշտակի, որ լուսաշաւիղ ճամբան բացած է դէպի երկինք:

Արարչութեան չորրորդ օրը երեւցան լուսաւորներ՝ արեւը, լուսինը եւ աստղերը: Չորրորդ օրը կը համապատասխանէ աշխարհի սինը եւ աստղերը: Չորրորդ շրջանի կեանքի երեւման, սկսած Աբրահամից, չորրորդ դարուն, չորրորդ շրջանի կեանքի երեւման, օրինակ համով, որուն տրուեցաւ աւետիսը՝ Իսահակի ծննդեան, օրինակ համով, որուն տրուեցաւ աւետիսը՝ Իսահակի ծննդը կը կապէ Ս. ստեղծը խորհրդական միութեամբ Իսահակի ծնունդը կը կապէ Ս. Կոյսի եղած աւետիքին. Բանը կը մարմնանայ, Լոյսը կու գայ բնակելու մարդոց մէջ եւ մերժելու խաւարը մեղքին: Լոյսի գաղափարին հետ այսպէս անուղղակի կապուած է նիւթի ընդհանուր մշակումը եւ քերթուածին մայր երակը:

Արարչութեան հինգերորդ օրը կը ստեղծուին ձուկերն ու թռչունները՝ ծովին ջուրերէն. ատիկա կը համապատասխանէ աշխարհի հինգերորդ դարուն, կամ հինգերորդ շրջանի մարդկութեան կեանքին, ինչ որ կը զուգընթանայ ու կը յարմարի Մովսէսի օրերուն՝ երբ կարմիր ծովէն Իսրայէլը անցաւ նորոգ կեանքին: Հինգշաբթին նուիրուած է առաքեալներուն, որոնցմէ շատերը ընտրուեցան ծովէն լիւրուած (Տիբերական), եւ եղան աշխարհի ծովէն որսացող քաղաքիչներ՝ մարդկային հոգիներու, եւ հրաւիրատուներ դէպի երկնային հարսանիքը, դէպի ճամբարիտ կեանքը եւ լոյսը:

Արարչութեան վեցերորդ օրը կը կատարուի մարդուն եւ կնոջ՝ Ադամի եւ Եւայի ստեղծումը, մեղքի երեւումը երկրի վրայ, անկումը մարդուն, խոստումը անոր փրկութեան, նմանապէս շաբթուան վերջին օրը փրկչին՝ վեցերորդ օրը շաբթուն (այն է ուրբաթ):

